

**«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի**

**Շահառուների խորհրդի 4-րդ կազմի 2009 թվականի հեկտեմբերի 13-ին ժամը 15:00-ին կայացած նիստի**

**ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1**

**Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝**

Անդրանիկ Վերանյանը	«Նոյեմբերյանի Համայնքների Սիւրբյուն» ԻԱՄ
Աշոտ Հովհաննիսյանը	«Դիլենտ սերվիս» կրթական ՀԿ
Գագիկ Բաբախանյանը	«Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ» ՀԿ
Լիլիթ Ասատրյանը	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Կարեն Մաթևոսյանը	«Ազատություն և իրավունք» ՀԿ
Կարինե Մովսիսյանը	«Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ
Նունե Պեպանյանը	«Լուսաստղ» ՀԿ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ

**Նիստից բացակայում էին՝**

Գրիգոր Բաղիրյանը	«Ինտեգրացիոն գործընթացների աջակցության կենտրոն» ՀԿ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի իրավաբանական հիմնադրամ»
Հովհաննես Հովհաննիսյանը	««Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Մարատ Ատովյանը	««Պրոգրես» սոցիալական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Պարզև Բարսեղյանը	«Հասարակական քարոզչություն» ՀԿ
Սյուզաննա Սողոմոնյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիա» ՀԿ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ

**Նիստին մասնակցում էին նաև՝**

Արա Հովսեփյանը	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Նորա Մարտիրոսյանը	Գլխավոր իրավախորհրդատու, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Եսթեր Հակոբյանը	Համակարգող ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Աննա Մալիկոյանը	Գլխավոր գործադիր տնօրենի օգնական, ՇԽ օգնականի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Գայանե Հարությունյանը	ՀՄԿ հայաստանյան գրասենյակի գործերի կառավարիչ
Վահագն Ասրյանը	«Սեմանտ» ՀԿ, 2009-2010թթ. ՇԽ ընտրական հանձնաժողովի նախագահ
Հոմերոս Սաֆարյանը	«Վարդենիս» ՋՕԸ, 2009-2010թթ. ՇԽ ընտրական հանձնաժողովի անդամ
Ալինա Լալայանը	«Արարատի մարզի կանաչներ» ՀԿ, 2009-2010թթ. ՇԽ ընտրական հանձնաժողովի անդամ
Վահե Հայրապետյանը	«Ընդդեմ ԶԻԱՀ» ազգային ասոցիացիա ՀԿ, 2009-2010թթ. ՇԽ ընտրական հանձնաժողովի անդամ
Ամալյա Բալաբեկյանը	«Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոն»

	երիտասարդական ՀՄ, 2009-2010թթ. ՇԽ ընտրական հանձնաժողովի անդամ
Մարինա Ղազարյանը	«Արեգ» գիտամշակութային երիտասարդական ասոցիացիա ՀԿ, 2009-2010թթ. ՇԽ ընտրական հանձնաժողովի անդամ
Արման Ռսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ
Ալեքսանդր Տեր-Հովակիմյանը	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
Թամարա Աբրահամյանը	«Արագ» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև ՁԼՄ ներկայացուցիչներ:

Նիստը բացեց Արա Հովսեփյանը և նշեց, որ սա ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհուրդի 4-րդ կազմի առաջին նիստն է: Ամեն տարի ընտրություններն ու ՇԽ կազմը յուրահատուկ են, բայց մեկ բան հստակ է՝ յուրաքանչյուր տարի արձանագրվում է առաջընթաց քաղաքացիական հասարակության կազմակերպվածության, ինքնակառավարման, ինքնադրսևորման և ընդհանրապես աշխատանքի մեջ: Այս տարի կարծես թե այդ առաջընթացը կրկին պետք է արձանագրվեր և ՊՈԱԿ-ը հույս ուներ, որ կգումարվեր լիակազմ նիստ, որտեղ կքննարկվեին ծագած բոլոր հարցերը և կգտնվեին փոխըմբռնման եզրեր: Արա Հովսեփյանը ցանկություն հայտնեց մինչև առաջարկված օրակարգի ներկայացումը, լսել ՇԽ ներկա անդամների կարծիքները իրենց գործընկերների կողմից վերջին օրերին բարձրացվող հարցերի և մտահոգությունների կապակցությամբ:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գործունեությունը միտված է ծրագրի շահերի պաշտպանությանը և այնպիսի քայլերի ձեռնարկմանը, որպեսզի ծրագիրը նախատեսված սեղմ ժամկետներում ամբողջությամբ իրականացվի և որևէ խոչընդոտների առաջ չկանգնի, իսկ կանգնելու դեպքում էլ արագ և արդյունավետ լուծվի՝ համաձայն ծրագրի կառավարման համաձայնագրերի:

Նունե Պեպանյանն առաջարկեց լսել ՇԽ ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Ասրյանին, որպեսզի պարզաբանվի առկա իրավիճակը և վերջինիս պատճառները:

Վահագն Ասրյանը հայտնեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՇԽ ընտրական հանձնաժողովի լիազորություններն ավարտվել են 2009թ. հոկտեմբերի 1-ին, ուստի ինքը հանդես կգա որպես ՇԽ ընտրական հանձնաժողովի նախկին նախագահ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ: Վահագն Ասրյանը ներկայացրեց, որ հանձնաժողովը սեղմ ժամկետներում և մեծ աշխատանքային ծանրաբեռնվածությամբ կատարել է իր գործառույթները: Ընտրություններն անցել են խաղաղ մթնոլորտում, առանց որևէ միջադեպերի, ընտրության գործընթացին ներկա են եղել մի շարք դիտորդներ, ընտրությունների ավարտից հետո ամփոփվել են արդյունքները, որևէ դիտողություններ և դժգոհություններ չեն ներկայացվել ընտրական հանձնաժողովին և ընտրությունների արդյունքների հայտարարումից հետո ընտրական գործընթացն ավարտվել է: Սակայն երկու օր անց ՇԽ անդամության թեկնածուներ Գաբրիել Բալայանի և Աշոտ Ալեքսանյանի կողմից դիմում է ուղղվել ՇԽ ընտրական հանձնաժողովին, որտեղ նշված է եղել, որ համաձայն որոշ տեղեկությունների անվավեր համարված քվեաթերթիկների մեջ առկա են վավեր քվեաթերթիկներ և հակառակը և խնդրել են անցկացնել վերահաշվարկ: ՇԽ ընտրական հանձնաժողովը, խուսափելու համար որևէ կասկածներից և անհարկի խոսակցություններից, նիստ է գումարել և որոշում է կայացրել ոչ թե իրականացնել վերահաշվարկ, այլ վերանայել քվեաթերթիկները, քանի որ բարձրացված հարցը վերաբերել է ոչ թե ձայների քանակին այլ քվեաթերթիկների վավերության և անվավերության հարցին, կազմվել է համապատասխան արձանագրություն, որն էլ տեղադրվել է ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ինտերնետային կայքում:

Վերանայումից հետո ի հայտ է եկել, որ վավեր քվեաթերթիկների մեջ չկան այնպիսիները, որոնք համարվեն անվավեր, իսկ անվավեր քվեաթերթիկների մեջ չկան վավեր քվեաթերթիկներ: Խնդիրն այն էր, որ մի քանի քվեաթերթիկներ, որոնց վրա v-աձև նշանը մի փոքր ավելի հաստ էր կամ անհավասար,

սակայն համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 58 հոդվածի ակնհայտ էր անձի կամքը և նշումն էլ կատարված էր նշման համար նախատեսված վանդակում: Բացի այդ ընտրական հանձնաժողովն ընտրության օրը հենց առաջին քվեաթերթիկը հանելուց նկատել է, որ այնտեղ v-աձև նշանը մի փոքր դուրս է եկած նախատեսված վանդակից, քննարկել է այդ հարցը և միաձայն որոշում ընդունել այսուհետ այդ կարգի քվեաթերթիկները համարել վավեր և այդ դիրքորոշումը պահպանվել է մինչև ընտրության վերջ:

Կարեն Մաթևոսյանը հարցրեց, թե արդյո՞ք վերանայումից հետո ՇԽ ընտրական հանձնաժողովի անդամներից որևէ մեկը ներկայացրել է հատուկ կարծիք:

Վահագն Ասրյանը հայտնեց, որ մինչև քվեաթերթիկների վերանայումը եղել է ընդամենը մեկ հատուկ կարծիք, իսկ վերանայումից և արձանագրության կազմումից հետո հատուկ կարծիքներ ընտրական հանձնաժողովը չի ստացել և չէր էլ կարող ստանալ այն պարզ պատճառով, որ համաձայն ՇԽ անդամների ընտրությունների կարգի հանձնաժողովի լիազորություններն ավարտված էին:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՊՈԱԿ-ը ստացել է մի քանի հատուկ կարծիքներ ՇԽ անդամներից, անդամության թեկնածուներից և դիտորդներից: Այդ հատուկ կարծիքներից մեկում բողոք է ներկայացված այն փաստի դեմ, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ինտերնետային կայքում տեղադրված չեն այդ հատուկ կարծիքները: Արա Հովսեփյանն ընդունեց վրիպումը, որը տեղի է ունեցել վերջերս ՊՈԱԿ-ում տիրող աշխատանքային գերծանրաբեռնվածության պատճառով և պատրաստակամություն հայտնեց բացթողումը շտկել:

Կարեն Մաթևոսյանը պարզաբանեց, որ իր հարցը վերաբերում է բացառապես ՇԽ ընտրական հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքի առկայությանը կամ բացակայությանը:

Արա Հովսեփյանը նշեց, որ ինքն այդպիսի հատուկ կարծիք չի ստացել:

Ալինա Լալայանը հայտնեց, որ համաձայն օրենքի հատուկ կարծիքները պետք է ընտրությունների օրը գրավոր ներկայացվեն ընտրական հանձնաժողովին և քննարկվեն վերջինիս կողմից: Արա Հովսեփյանի մոտ գտնվող հատուկ կարծիքներից միայն մեկն է քննարկվել հանձնաժողովի կողմից և համապատասխան ընթացք է տրվել, իսկ մյուս հատուկ կարծիքները ընտրական հանձնաժողովի լիազորությունների գործողության ընթացքում չեն ներկայացվել և հանձնաժողովը վերջիններս չի քննարկել:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ այդ հատուկ կարծիքները թվագրված են հոկտեմբերի 1-ով և ներկայացվել են ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին, չնայած, որ հասցեագրված են եղել ընտրական հանձնաժողովին:

Անդրանիկ Վերանյանը հարցրեց, թե ընտրությունների անցկացման օրը որևէ բողոքներ, հատուկ կարծիքներ եղել են, թե՛ ոչ:

Վահագն Ասրյանը պատասխանեց, որ այդպիսիք չեն եղել:

Պողոս Շահինյանը շնորհակալություն հայտնեց Արա Հովսեփյանին հարցը բարձրացնելու համար և նշեց, որ հատուկ կարծիք ներկայացրած գործընկերները ներկա չեն, ուստի անհասկանալի է, թե ընդհանրապես ինչ է քննարկվում: Ի վերջո ՇԽ-ն հավաքվել է աշխատելու համար և ոչ ժամանակ ծախսելու ու քննարկելու այն մարդկանց կարծիքները, ովքեր անգամ ցանկություն չեն ունեցել գալ և ներկա լինել այդ հարցերի քննարկմանը: Անհրաժեշտ է լինել ավելի պրոդուկտիվ և անցնել օրակարգային հարցերի քննարկմանը՝ առաջին հերթին շնորհակալություն հայտնել ՇԽ ընտրական հանձնաժողովին:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ իր կողմից հարցի բարձրացման նպատակն այն էր, որ բոլոր ծագած հարցերի մասին խոսվի: Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ ՇԽ ընտրական գործընթացին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը ՇԽ ընտրությունների ժամանակ հանդես է եկել բացառապես որպես օժանդակող մարմին՝ հնավարություն տալով քաղաքացիական հասարակությանն առաջնորդել

այս գործընթացը, սակայն ի վերջո ՇԽ-ն հանդիսանում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացմանն առնչվող մարմին և հանդես է գալիս ծրագրի շրջանակներում, ուստի շատ ցավալի է, որ ՇԽ առաջին նիստն իրականացվում է ծանր մթնոլորտում և նիստին ներկա են ՇԽ 15 անդամներից միայն 8-ը: Այնուամենայնիվ ՊՈԱԿ-ի դիրքորոշումը հետևյալն է. ՇԽ ընտրական հանձնաժողովն ընտրվել է ՇԽ կողմից և ՇԽ առաջնորդությամբ իրականացրել է իր առջև դրված խնդիրները՝ ժամանակին և ըստ կանոնակարգի: Այս առումով ՊՈԱԿ-ը որևէ խնդիր ընտրական հանձնաժողովի հետ կապված չունի: Ե՛վ ընտրություններից և՛ վերահաշվարկից հետո ընտրական հանձնաժողովի կողմից ընտրություններին առնչվող բոլոր փաստաթղթերը փակ ծրարներով հանձնվել են ՊՈԱԿ-ին և երբևէ չի քննարկվել առանց վերջիններիս մասնակցության ծրարները բացելու հարցը, չնայած, որ փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին ստացվել են մի շարք դիմումներ: Ներկայումս ընտրական հանձնաժողով չկա, քանի որ վերջինիս լիազորություններն ավարտվել են, սակայն կա ՇԽ, որի որոշման և լիազորության դեպքում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պատրաստ է ՇԽ-ին կամ վերջինիս կողմից լիազորված անձին հանձնելու ընտրություններին առնչվող բոլոր փաստաթղթերը: Որևէ այլ ձևով ՊՈԱԿ-ը չի պատրաստվում միջամտել այդ գործընթացին և հիմք չունի չընդունելու ընտրությունների արդյունքները: Ծիշտ է ստեղծված իրավիճակը լավագույնը չէ, սակայն պետք է ընդունել այն որպես փաստ:

Արա Հովսեփյանն առաջարկեց այլ մեկնաբանություններ չլինելու դեպքում անցնել առաջ և առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատուին ներկայացնել ՇԽ քվորումին վերաբերող՝ ՇԽ կանոնակարգով և Կառավարման համաձայնագրով նախատեսված դրույթները:

Նորա Մարտիրոսյանը ներկայացրեց, որ ՇԽ կանոնակարգի 3.9 կետի համաձայն ՇԽ նիստերն իրավագոր են, եթե նիստին ներկա են Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը, ներառյալ նիստից բացակայող անդամների լիազոր ներկայացուցիչները, այսինքն նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են ՇԽ առնվազն 10 անդամ: Իսկ Կառավարման համաձայնագրի 3.3 բաժնի ք/ կետի համաձայն ՇԽ յուրաքանչյուր նիստում քվորումն ապահովված է համարվում, եթե նիստին ներկա են ՇԽ անդամների առնվազն պարզ մեծամասնությունը, այսինքն՝ 8 անդամ: Իրավական տեսանկյունից, համաձայն ՀՀ սահմանադրության, վավերացված միջազգային պայմանագրերն ունեն գերակայող ուժ, այնուամենայնիվ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը չի բացառում ՇԽ իրավունքն ընդունելու վերոնշյալ որոշումներից ցանկացածը:

Արա Հովսեփյանն ավելացրեց, որ ՇԽ-ն մեկ անգամ արդեն իսկ իր իրավունքից օգտվել է և ՇԽ կանոնակարգում ամրագրել է քվորումին վերաբերող ավելի խիստ դրույթ, քան նախատեսված է միջազգային պայմանագրով: Անհրաժեշտ է որպեսզի ՇԽ-ն քննարկի և որոշում կայացնի, թե ի վերջո որ տարբերակով է առաջնորդվելու. որպես հիմք ընդունելու է ՇԽ կանոնակարգը, թե՛ Կառավարման համաձայնագիրը:

Կարեն Մաթևոսյանը հարցրեց, թե ՇԽ կանոնակարգի մշակմանը արդյո՞ք մասնակցել է նաև ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատուն, քանի որ սկնհայտ է ՇԽ կանոնակարգի և Կառավարման համաձայնագրի միջև առկա հակասությունը:

Նորա Մարտիրոսյանը հայտնեց, որ ՊՈԱԿ-ը չի միջամտել ՇԽ կանոնակարգի փոփոխման գործընթացին՝ դրա իրավունքը թողնելով ՇԽ-ին, որպես քաղաքացիական հասարակության կայացած մարմին:

Արա Հովսեփյանն ավելացրեց, որ Կառավարման համաձայնագրում ամրագրված է, որ ՇԽ քվորումն ապահովված է համարվում, այն դեպքում երբ նիստին ներկա է ՇԽ անդամների առնվազն պարզ մեծամասնությունը, այսինքն ամրագրված է նվազագույն շեմը, մինչդեռ ՇԽ-ն, օգտվելով իր որոշումներ ընդունելու իրավունքից, սահմանել է ավելի խիստ պայմաններ:

Պողոս Շահինյանը հայտնեց, որ ինքն անձամբ մասնակցել է ՇԽ կանոնակարգի մշակմանը և այդ դրույթի ամրագրման ժամանակ փորձ է արվել որոշումների կայացմանը ներգրավել ՇԽ հնարորինս շատ թվով անդամների: Ըստ էության այս հարցին անդրադարձ չէր կատարվի, եթե վտանգի տակ դրված չլիներ ՇԽ ընդհանուր գործունեությունը: Արդեն իսկ ՇԽ-ն կորցրել է

բավականին մեծ ժամանակ, քանի որ ՇԽ առաջին նիստը նախատեսված էր գումարել հոկտեմբերի 2-ին, սակայն ի հայտ եկած խնդիրների պատճառով բավականին հետաձգվեց: Նման իրավիճակում անհրաժեշտ է ղեկավարվել գերակայող ուժ ունեցող Կառավարման համաձայնագրով և անցնել բուն աշխատանքի իրականացմանը:

Լիլիթ Ասատրյանը նշեց, որ նախորդ տարի ՇԽ կանոնակարգին միակ դեմ քվեարկող անձն ինքն է եղել և դրա համար հիմք են հանդիսացել այն հակասությունները, որոնք առկա են կապված Համաձայնագրերի հետ: Այդ հակասություններից մեկն էլ հենց բարձրացված հարցն է: ՇԽ նոր կազմի գործունեության առաջին իսկ քայլերից մեկը պետք է լինի ՇԽ կանոնակարգի վերանայումը՝ բացառելու համար նմանատիպ հակասությունները: Անցյալ տարի ՇԽ կանոնակարգի վերանայումն ըստ էության վստահվել է ՇԽ կազմում առկա իրավաբաններին և ներկայումս ՇԽ-ն այսպիսի իրավիճակում է հայտնվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակը շարունակվելու միտում ունի, ուստի պետք է ղեկավարվել Կառավարման համաձայնագրով և դա բնավ խախտում չի հանդիսանա:

Ալեքսանդր Տեր-Հովակիմյանը նախ շնորհավորեց ՇԽ նորընտիր անդամներին՝ հայտնելով, որ ՇԽ ընտրությունները կայացել են և դա միանշանակ է: Նորագույն պատմության մեջ չկա մի դեպք, երբ չլինեն մարդիկ, ովքեր դժգոհ են կամ համամիտ չեն ընտրությունների արդյունքների հետ և դա մեկ անգամ ևս ապացուցում է, որ ընտրությունները կայացել են: Միաժամանակ ավելացրեց, որ ինքը ևս մասնակցել է ՇԽ կանոնակարգի վերանայման գործընթացին և վստահ է, որ այն ավելի լավն է, քան նախկին գործող տարբերակները: Սակայն տվյալ կանոնակարգը, նույնիսկ իր թերություններով հանդերձ, լուծում է մաս այս իրավիճակը, մասնավորապես՝ ՇԽ կանոնակարգով նախատեսված է, որ եթե ՇԽ անդամներից մեկը երկու հաջորդական նիստերի չի մասնակցում, ապա նա կարող է հեռացվել ՇԽ կազմից և թափուր տեղը լրացվել ընտրությունների ընթացքում հաջորդ առավելագույն ձայներ հավաքած անձով:

Աշոտ Հովհաննիսյանը, միանալով Արա Հովսեփյանի այն կարծիքին, որ դժգոհությամբ սկսելը լավ չէ և ավելի դրական կլիներ, եթե առկա հարցերը քննարկվեին, նշեց, որ այնուամենայնիվ անհրաժեշտ է, անգամ ոչ ֆորմալ տարբերակով ՇԽ 15 անդամներով հավաքվել, քննարկել առկա հարցերը և առաջ անցնել:

Նունե Պեպանյանը նշեց, որ անհրաժեշտ է շնորհակալություն հայտնել ՇԽ ընտրական հանձնաժողովին իրականացրած ծանր աշխատանքի համար և առաջ անցնել օրակարգային հարցերով:

Արա Հովսեփյանը նշեց, որ ի վերջո որոշում կայացնելու իրավունքը պատկանում է ՇԽ-ին, սակայն պետք չէ մոռանալ, որ խոսքը գնում է ծրագրի ՇԽ մասին: Կա երկու հնարավոր մոտեցում. առաջին՝ ղեկավարվել Կառավարման համաձայնագրով և անցնել օրակարգային հարցերի քննարկմանը և երկրորդը՝ հնարավորություն տալ ՇԽ բացակա անդամներին մասնակցել օրակարգային հարցերի քննարկմանը՝ հետաձգելով նիստը:

Պողոս Շահինյանը նշեց, որ ինքը մաս պատասխանատվություն է կրում իր ընտրողների առջև և չի կարող վատնել թանկ ժամանակը:

Լիլիթ Ասատրյանն առաջարկեց հեռախոսային կապով ճշտել բացակա անդամներից պատրաստվում են վերջիններս հետայսու մասնակցելու ՇԽ նիստերին, թե՛ ոչ:

Կարինե Մովսիսյանը դեմ արտահայտվեց այդ մոտեցմանը, առաջարկեց քվորումը համարել առկա և նիստ գումարել:

Քննարկումներից հետո ՇԽ-ն միաձայն որոշեց ու հաստատեց, որ քվորումն առկա է և նիստը կայացած:

Համաձայն ՇԽ կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբենակական կարգի)՝ նիստը նախագահում էր ՇԽ անդամ Անդրանիկ Վերանյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. 15:00 Ընտրական հանձնաժողովի անդամներին շնորհակալագրերի հանձնում  
*Արա Հովսեփյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն*
2. 15:30 Ծանոթացում շահառուների խորհրդի նոր անդամների հետ
3. 16:00 ՇԽ նախորդ կազմում ընդգրկված անդամների ներկայացումներն իրականացրած աշխատանքի, ներքին փաստաթղթերի և ընդունված գործելաճի վերաբերյալ
4. 16:30 Կառավարման խորհրդի անդամների ընտրություն. ա/ ընթացակարգի քննարկում, թեկնածուների առաջադրում, բ/ քվեարկություն
5. 17:00 Այլ հարցեր

Լիլիթ Ասատրյանն առաջարկեց նախ անդրադառնալ օրակարգի 1-ին հարցին, հետո 5 թուպեանոց ընդմիջում անել և նոր անդրադառնալ օրակարգի մյուս հարցերին:

Կարեն Մաթևոսյանն առաջարկեց օրակարգից հանել երրորդ հարցը, քանի որ այդ հարցի քննարկումը շատ ավելի ժամանակատար է և լուրջ, իսկ 5-րդ հարցի շրջանակներում քննարկել և հաստատել ՇԽ կանոնակարգը վերանայող հանձնաժողովի ստեղծման հարցը:

Նախագահողն առաջարկեց քվեարկել 1-ին և 2-րդ հարցերի միջև 5 թուպեանոց ընդմիջում անելու առաջարկը: Առաջարկն ընդունվեց և **հաստատվեց միաձայն:**

Նախագահողն առաջարկեց քվեարկել 3-րդ հարցը օրակարգից հանելու կապացությամբ: Առաջարկն **ընդունվեց 7 կողմ և մեկ ձեռնպահ** /Նույն Պեպանյան/ ձայներով:

Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգի 5-րդ հարցի շրջանակներում ՇԽ կանոնակարգի վերանայման հանձնաժողովի կազմի հաստատման հարցը: Հարցը **հաստատվեց 7 կողմ 1 ձեռնպահ** /Անդրանիկ Վերանյան/ ձայներով:

Համապատասխան փոփոխություններից հետո օրակարգը հաստատվեց միաձայն:

**Օրակարգի առաջին հարցի շրջանակներում** Արա Հովսեփյանը ՇԽ ընտրական հանձնաժողովի ներկա անդամներին հանձնեց շնորհակալագրերը և շնորհակալություն հայտնեց վերջիններիս կատարած աշխատանքի համար:

**Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում** ՇԽ ներկա անդամները հակիրճ ներկայացրեցին իրենց և իրենց կողմից ներկայացվող կազմակերպությունները:

Ներկայացված տեղեկատվությունը ՇԽ կողմից ընդունվեց ի գիտություն:

**Օրակարգի չորրորդ հարցի շրջանակներում** Արա Հովսեփյանը որպես հիշեցում հայտնեց, որ նախորդ տարիներին Կառավարման խորհրդի պատվիրակների ընտրության ժամանակ միշտ փորձ է արվել ապահովել ՇԽ բոլոր անդամների մասնակցությունը, քանի որ կառավարման խորհուրդը հանդիսանում է ծրագրի շրջանակներում որոշումներ կայացնող մարմին և այդ հարցին անհրաժեշտ է լուրջ մոտեցում դրսևորել:

Լիլիթ Ասատրյանը բացասական գնահատեց այն փաստը, որ ՇԽ տվյալ նիստին բացակայում են ՇԽ 7 անդամներ, բայց հաշվի առնելով հարցի կարևորությունն առաջարկեց հետաձգել Կառավարման խորհրդի անդամների ընտրությունները՝ որպեսզի բացառվեն ծրագրի անվան շուրջ շահարկումները:

Պողոս Շահինյանը նշեց, որ ՇԽ նիստի օրակարգը ներկայացված է եղել ՇԽ բոլոր անդամներին և վերջիններս իրազեկ են եղել նիստի ընթացքում քննարկման ենթակա հարցերին:

Կարեն Մաթևոսյանը հայտնեց, որ ՇԽ-ն պետք է պատրաստ լիներ իր վրա վերցնելու իր որոշումների կայացման ողջ պատասխանատվությունը, հաշվի առնելով այն փաստը, որ նիստը կայացած է և օրակարգը հաստատված: Այդ պատասխանատվությունը ՇԽ-ն վերցրել է և ընտրությունները պետք է իրականացվեն:

Պողոս Շահինյանն առաջարկեց զանգահարել ՇԽ բացակա անդամներից մի քանիսին՝ պարզելու համար բացակայության պատճառները:

Լիլիթ Ասատրյանն առաջարկեց լինել ավելի հանդուրժող և խնդրեց Արա Հովսեփյանին ներկայացնելու նաև իր դիրքորոշումը այս հարցի կապակցությամբ:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ինքը միշտ կողմնակից է այն փաստին, որպեսզի ապահովվի ՇԽ անդամների հնարավոր մեծ թվի մասնակցություն ընտրության գործընթացին:

Կարինե Մովսիսյանը դեմ արտահայտվեց կառավարման խորհրդի անդամների ընտրությունը հետաձգելու հարցին՝ հիմք ընդունելով գործող Կառավարման համաձայնագիրը:

Կարեն Մաթևոսյանը ևս բացասական կարծիք հայտնեց ԿԽ անդամների ընտրությունները հետաձգելու վերաբերյալ:

Նունե Պեպանյանը միացավ Պողոս Շահինյանի՝ բացակա անդամներին զանգահարելու առաջարկին:

Մինչև օրակարգի 4-րդ հարցի հիմնական մասին անդրադառնալը ՇԽ անդամները **5 կողմ և 3 ձեռնպահ** /Անդրանիկ Վերանյան, Կարեն Մաթևոսյան, Կարինե Մովսիսյան/ **ձայներով որոշեցին** հայտարել 7 րոպե ընդմիջում:

Ընդմիջումից հետո **5 կողմ 3 ձեռնպահ** /Կարինե Մովսիսյան, Պողոս Շահինյան, Անդրանիկ Վերանյան/ **որոշում ընդունվեց** զանգահարել ՇԽ բացակա անդամներին:

Լիլիթ Ասատրյանը զանգահարեց ՇԽ անդամներ Հովհաննես Հովհաննիսյանին և Գրիգոր Բաղիրյանին, ովքեր հայտնեցին, որ նիստին չեն ներկայացել նախ զբաղվածության և երկրորդն այն պատճառով, որ ՇԽ թեկնածուներ Գաբրիել Բալայանի և Աշոտ Ալեքսանյանի կողմից բարձրացված հարցը վերջնական լուծում չի ստացել: Վերջիններս տեղեկացվեցին, որ ՇԽ-ն պատրաստվում է իրականացնել կառավարման խորհրդի ընտրություններ և պատրաստ է սպասելու իրենց մասնակցությանը: Ե՛վ Հովհաննես Հովհաննիսյանը և՛ Գրիգոր Բաղիրյանը հայտնեցին, որ նիստին ներկայանալ չեն կարող:

Լիլիթ Ասատրյանը նաև փորձ արեց զանգահարելու Կարեն Զադոյանին, սակայն վերջինիս բոլոր հեռախոսահամարները անջատված էին կամ չէին պատասխանում, ուստի կապ հաստատել չհաջողվեց:

Գագիկ Բաբախանյանը զանգահարեց Մարատ Ատովմյանին և ներկայացրեց առկա իրավիճակը՝ առաջարկելով միանալ նիստին: Մարատ Ատովմյանը հայտնեց, որ այլ պայմանավորվածություններ ունի և գտնվում է Երևանից դուրս ու չի կարող գալ:

ՇԽ ներկա անդամները որոշեցին սկսել կառավարման խորհրդի պատվիրակների ընտրության գործընթացը և առաջադրել թեկնածուներ:

Կարինե Մովսիսյանը որպես կառավարման խորհրդի անդամության թեկնածու առաջարկեց Կարեն Մաթևոսյանին՝ բարձր գնահատելով վերջինիս կազմակերպվածությունը և հաստատակամությունը:

Անդրանիկ Վերանյանն առաջարկեց Պողոս Շահինյանի թեկնածությունը՝ նշելով, որ նա ունի կառավարման խորհրդում աշխատանքի փորձ և պատրաստվածություն:

Լիլիթ Ասատրյանը ներկայացրեց Անդրանիկ Վերանյանի թեկնածությունը և նշեց, որ վերջինս սերտ առնչություն ունի ծրագրին և քաջատեղյակ է ծրագրում առկա խնդիրներին և ընթացքին:

Գագիկ Բաբախանյանը բարձր արտահայտվեց Կարինե Մովսիսյանի պրոֆեսիոնալիզմի և մարդկային հատկանիշների վերաբերյալ և առաջարկեց վերջինիս թեկնածությունը:

Պողոս Շահինյանը և Նունե Պեպանյանն առաջադրեցին Լիլիթ Ասատրյանի թեկնածությունը:

Կարեն Մաթևոսյանն առաջադրեց Գագիկ Բաբախանյանի թեկնածությունը, ով սակայն ինքնաբացարկ հայտնեց, ելնելով իր աշխատանքային ծանրաբեռնվածությունից:

ՇԽ-ն **միաձայն հաստատեց** Կառավարման խորհրդի թեկնածուների հետևյալ կազմը.

1. Անդրանիկ Վերանյան
2. Լիլիթ Ասատրյան
3. Կարեն Մաթևոսյան
4. Կարինե Մովսիսյան
5. Պողոս Շահինյան

Թեկնածուների կազմը հաստատելուց հետո ՇԽ-ն միաձայն հաստատեց կառավարման խորհրդի անդամների ընտրության հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

- Աշոտ Հովհաննիսյան
- Արման Ոսկանյան
- Գագիկ Բաբախանյան

ՇԽ անդամներին տրամադրվեց կառավարման խորհրդի անդամների ընտրության հաշվիչ հանձնաժողովի անդամների կողմից վավերացված մեկական քվեաթերթիկ: Փակ գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովը բացեց քվեատուփը:

Քվեատուփից հանվեցին 8 քվեաթերթիկներ: Հաշվիչ հանձնաժողովը կատարեց հաշվարկը, ամփոփեց արդյունքները և հայտնեց, որ բոլոր քվեաթերթիկները վավեր են և բոլոր 5 թեկնածուները հավաքել են հավասար 8 ձայներ:

Քվեարկության արդյունքների հայտարարումից հետո ՇԽ-ն **միաձայն հաստատեց** կառավարման խորհրդի պատվիրակների ընտրության արդյունքները:

Այլ հարցերի շրջանակում շահառուների խորհուրդը **միաձայն հաստատեց** ՇԽ կանոնակարգի վերանայման հանձնաժողովի ստեղծումը հետևյալ կազմով՝

- Պողոս Շահինյան
- Նունե Պեպանյան
- Կարեն Մաթևոսյան

Այլ հարցերի շրջանակում Անդրանիկ Վերանյանն առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գրասենյակում հանդիպում ունենալ ՇԽ բացակա անդամների հետ, քննարկելու բոլոր խնդրահարույց հարցերը:

Առաջարկը **միաձայն ընդունվեց ի գիտություն:**

Օրակարգի հարցերի սպառումից հետո ՇԽ-ն որոշեց ՇԽ հաջորդ նիստը գումարել 2009թ. հոկտեմբերի 20-ին ժամը `14:00-ին:

*Նախագահող`*

*Ա. Վերանյան*

*Քարտուղարի ժամանակակից  
սլաշտոնակատար`*

*Ա. Մալիկոյան*

*13-ը հոկտեմբերի, 2009թ.*